ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ

Աշխարհաքաղաքականությունը (գեոպոլիտիկան) իր ողջ պատմության ընթացքում եղել է և այսօր էլ համարվում է առանձնահատուկ գիտություն: Սրա հետազոտությունները հաճախ որոշիչ դեր են խաղացել առանձին պետությունների, մակրոտարածաշրջանների և ամբողջ մարդկության համար:

Մասնագետների մի խումբ այսօր աշխարհաքաղաքականությանը համարում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հիմնախնդիրների լուծման գրեթե ունիվերսալ միջոց: Կան նաև աշխարհաքաղաքականությանը զուսպ վերաբերվողներ, խելամտության սահմաններում նրան օգտագործելը թույլատրելի համարողներ: Կան նաև այնպիսիք, ովքեր աշխարհաքաղաքականությանը համարում են վաղուց իրեն սպառած մոտեցում, իսկ նրա հիմքի վրա ստեղծված հայեցակարգերը՝ ոչ ավելին, քան կաբինետային իմաստակում:

Աշխարհաքաղաքականությանը հետաքրքիր է բնութագրել Ա. Դուգինը. «աշխարհաքաղաքականությունը իշխանության աշխարհայացքն է, գիտություն է իշխանության մասին և իշխանության համար ... քաղաքական ընտրախավի դիսցիպլին է ... կառավարելու գիտություն» [4, էջ 13-14]:

Աշխարհաքաղաքականության դերի մասին տարածայնությունը նրա զարգացման մակարդակի բնութագրիչ է, ավելի ճիշտ՝ նրա տեսական թերմշակության վկայություն:

Գիտական ճանաչողությունը ընդհանրապես և դրա յուրաքանչյուր ճյուղ իր ձևավորման և զարգացման ընթացքում անցնում է որոշակի պարտադիր փուլեր, այն է. 1. փաստական նյութի կուտակման փուլ, 2. փաստերի ու երևույթների նկարագրության փուլ, 3. վերլուծության, բացատրության և տեսական ընդհանրացումների փուլ, 4. գիտական կանխատեսման և երևույթների կառավարման գիտական ապահովման փուլ:

Աշխարհաքաղաքականության հետազոտությունների արդյունքները, կարելի է ասել, ներկայացնում են 2-րդ և 3-րդ փուլի պահանջները, այն էլ՝ մասամբ: Թեև նոր աշխարհակարգի ձևավորմանը զուգընթաց (հատկապես հետխորհրդային երկրներում), հրատարակվում են աշխարաքաղաքականության բազմաթիվ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ,

գիտական հոդվածներ, սակայն այս ահռելի գրականությունը չի կարողանում տալ գրեթե մեկդարյա պատմություն ունեցող այս գիտության կարևոր տեսական-մեթոդաբանական խնդիրների լուծումը, տարակարծիք են անգամ «աշխարհաքաղաքականության» բովանդակության և գիտությունների դասակարգման համակարգում նրա տեղի մասին: Աշխարհաքաղաքականությունը դժվարություններ ունի (նաև թերանում է) տեսական ընդհանրացումներին վերաբերող խնդիրների լուծման գործում, իսկ նրա կառավարման գործառույթի կարևորությունը անհրաժեշտ է դարձնում հնարավորինս կարճ ժամանակահատվածում ոչ միայն 3-րդ փուլի, այլև 4-րդ՝ գիտական կանխատեսման և երևույթների գիտական կառավարման փուլի պահանջների կատարումը:

Աշխարհաքաղաքականության զարգացման մակարդակի բարձրացման, այսինքն, նրա տեսական և գործնական խնդիրների լուծման արդյունավետության ապահովման համար կարևոր է նրա այսօրվա վիճակը պայմանավորող պատճառների նկատմամբ ուշադրությունը:

Աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակի հիմնական պատճառներն են՝

- աշխարհաքաղաքականության հիմնական դպրոցների ոչ օբյեկտիվ հետազոտությունները,
- այս գիտության կողմից հարակից գիտությունների հետազոտությունների արդյունքների և մոտեցումների ոչ նպատակային և ոչ արդյունավետ օգտագործումը,
- սոցիալիստական երկրներում աշխարհաքաղաքականության նկատմամբ բացասական վերաբերմունքը,
- այս գիտության սուբյեկտների կողմից աշխարհաքաղաքականության տեսական կարևորագույն խնդիրների նկատմամբ անուշադրությունը:

1. <u>Ոչ օբյեկտիվ հետազոտությունները</u> որպես աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակի պատճառ:

Գրեթե ամբողջ 20-րդ դարը, որի ընթացքում է աշխարհաքաղաքականությունը զարգացել որպես գիտության ճյուղ, եղել է ավանդական աշխարհաքաղաքականության ազդեցության ներքո՝ բրիտանական ժառանգության համար պայքարի և սառը պատերազմի աշխարհակարգերում միջազգային հարաբերությունները հիմնականում որոշվել են ավանդական աշխարհաքաղաքականության դպրոցների (բրիտանական, գերմանական, ամերիկյան) արդյունքներով: Իսկ դրանք արտահայտել են հիմնականում առանձին գերտերությունների (մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի) շահերը: Այս դպրոցների կողմից աշխարհաքաղաքականությունը ընկալվում էր որպես

այլ պետությունների ու ժողովուրդների նկատմամբ իրենց երկրների առավելությունները հիմնավորող, դրանց անվտանգությունն արհամարհող և դրանց նկատմամբ էքսպանսիան ու գերիշխանությունն արդարացնող գիտություն: Սրանք հաճախ անտեսում էին ոչ միայն այլ ուժերի, այլև գերտերությունների ռեսուրսների և հզորության օբյեկտիվ հետազոտությունների կարևորության սկզբունքը: Ավանդական աշխարհաքաղաքականության հիմքում ընկած տեսական հիմքերը (աշխարհագրական դետերմինիզմ, սոցիալ-դարվինիզմ, քաղաքական ռեալիզմ) չէին կարող բավարարել օբյեկտիվության պահանջները: Այս դպրոցների կողմից իրենց երկրների աշխարհաքաղաքական հնարավորությունների գերագնահատումը բացասական ազդեց ոչ միայն աշխարհաքաղաքականության՝ որպես գիտության զարգացման գործընթացի, այլև մարդկության ճակատագրի վրա:

Ավանդական աշխարհաքաղաքականության ազդեցությունը հսկայական է նաև ժամանակակից միջազգային և աշխարհաքաղաքական հարաբերությունների, գերտերությունների աշխարհաքաղաքական գերակայությունների, ինչպես նաև ժամանակակից աշխարհաքաղաքականության դպրոցների վրա: Չնայած դրան, վերջիններս իրենց առջև խնդիր են դրել ստեղծել այնպիսի տեսական-մեթոդաբանական հիմք, որը աշխարհաքաղաքական տարածության և նրա առանձին բաղադրիչների օբյեկտիվ հետազոտությունների հնարավորություններ կստեղծի: Կարելի է ասել աշխարհաքաղաքականությունը էքսպանսիայի արդարացումից վերածվում է էքսպանսիայի և դրա դեմ հակակշիռների հետազոտության:

2. <u>Հարակից գիտությունների հետազոտությունների արդյունքների և մոտեցումների ոչ նպատակային և ոչ արդյունավետ օգտագործումը որպես աշխարհաքաղաքականության զարգացման գածր մակարդակի պատճառ:</u>

Աշխարհաքաղաքական հետազոտություններ հիմնականում կատարել են (նաև կատարում են) աշխարհագետները և քաղաքագետները, սակայն նրանցից քչերն են միաժամանակ տիրապետում և քաղաքագիտության, և աշխարհագրության տեսական ժառանգությանը (որոնք անհրաժեշտ են աշխարհաքաղաքական հետազոտությունների համար). աշխարհագետների մոտ նկատելի է քաղաքագիտական, իսկ քաղաքագետների մոտ՝ աշխարհագրական գիտելիքների ոչ բավարար լինելը: Միաժամանակ, քաղաքագետների կողմից աշխարհաքաղաքականությունը համարվում է քաղաքագիտության, աշխարհագետների կողմից՝ աշխարհագրության բաղադրիչ: Այս վիճարկելի հարցը իր խոչընդոտող դերն ունի աշխարհաքաղաքականության ցանկալի և անհրաժեշտ մակարդակին համապատասխան գիտական արդյունքների

ստեղծման գործում: Աշխարհաքաղաքականությունը գիտական ճանաչողության 3-րդ փուլը կարող է հաղթահարել միայն այն ժամանակ, երբ արդյունավետ օգտագործի ոչ միայն աշխարհագրության (հասարակական աշխարհագրության) և քաղաքագիտության տեսական ժառանգությունը, այլև այնպիսի գիտությունների հետազոտությունների արդյունքներն ու մեթոդները, ինչպիսիք են՝ սեկյուրիտոլոգիան (կենսագործունության անվտանգության մասին գիտություն), ռեսուրսագիտությունը, տնտեսագիտությունը, կոնֆլիկտոլոգիան, էթնոլոգիան և այլն:

3. <u>Սոցիալիստական երկրներում այս գիտության նկատմամբ բացասական վերաբերմունքը որպես աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակի պատճառ:</u>

Աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակի կարևոր պատճառներից են սառը պատերազմի աշխարհակարգում բևեռներից մեկում՝ ԽՍՀՄ-ում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում «աշխարհաքաղաքականություն» գիտության բացակայությունը, նրան տրվող խիստ բացասական գնահատականները, արդյունքում՝ աշխարհաքաղաքականության զարգացման գործում այս երկրների գիտական մեծ ներուժը չօգտագործելը:

Սոցիալիստական երկրներում աշարհաքաղաքականությանը համարում էին ռեակցիոն, հակագիտական, իմպերիալիստական-բուրժուական հայեցակարգ, դոկտրինա, տեսություն ...

Բերենք մի քանի օրինակ խորհրդային գրականության մեջ առկա «աշխարհաքաղաքականության» սահմանումների և բնութագրումների.

- «գեոպոլիտիկան իմպերիալիզմի գաղափարախոսների ռեակցիոն տեսություն է, որոնք նպատակ են դրել նվաճել ուրիշի տերիտորիաներ՝ ճգնելով այդ բանը հիմնավորել իրենց պետության տերիտորիայի «անբավարար» լինելով» [1, էջ 52],

- «գեոպոլիտիկան իմպերիալիստական էքսպանսիայի զանազան ձևերն արդարացնող քաղաքական դոկտրինա է, ... տեսական առումով՝ բուրժուական ֆետիշիզմի տարատեսակներից մեկը» [2, էջ 86],

- «աշխարհաքաղաքականությունը բուրժուական ռեակցիոն հայեցակարգ է, որը իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականությունը արդարացնում և բացատրում է բնական-աշխարհագրական պայմաններով, աշխարհագրական դիրքով, բնակչության ռասայական տարբերություններով» [3, էջ 63]:

- «գեոպոլիտիկան իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականության հիմնավորման համար ֆիզիկական, տնտեսական և քաղա-

քական աշխարհագրության խեղաթյուրված մեկնաբանված տեղեկություններն օգտագործող ռեակցիոն հակագիտական դոկտրինա է» [6, էջ 122]:

Աշխարհաքաղաքականության նկատմամբ բացասական այս վերաբերմունքի հիմնական պատճառներն են՝

- այս գիտության հիմնարար դրույթները հակասում էին պաշտոնական մարքսիզմի դոգմաներին, հատկապես հասարակական զարգացման նկատմամբ դասական մոտեցմանը և պրոլետարական համերաշխության գաղափարին,

- գերմանական աշխարհաքաղաքականությունը հիմնավորում էր ազգայնականության տարածքային հավակնությունները, որը վարկաբեկել էր աշխարհաքաղաքականությանը ազգայնական ագրեսիայից ամենամեծ կորուստները կրած ԽՍՀՄ-ում,

- խորհրդային արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ նախապատվությունը տրվում էր գաղափարական գործոններին՝ ի վնաս մնացած բոլորի (տնտեսականի, աշխարհագրականի, ժողովրդագրականի և այլն) [5, էջ 9]:

20-րդ դարի վերջում աշխարհաքաղաքականությունը ճանաչում գտավ հետխորհրդային երկրներում:

1989թ-ին հրատարակված «Философский энциклопедический словарь»-ը աշխարհաքաղաքականությանը արդեն չէր տալիս այդպիսի խիստ բացասական գնահատական, սակայն այն բնութագրում էր որպես «Արևմտյան քաղաքագիտության հայեցակարգ, համաձայն որի պետությունների քաղաքականությունը (հատկապես արտաքին), հիմնականում կանխորոշված է աշխարհագրական տարբեր գործոններով՝ տարածական տեղադրվածությամբ, որոշակի բնական ռեսուրսների առկայությամբ կամ բացակայությամբ, կլիմայով, բնակչության խտությամբ ու նրա աճի տեմպերով և այլն» [7, էջ 116]:

Հետխորհրդային տարածքում աշխարհաքաղաքականության նկատմամբ առկա հսկայական հետաքրքրությունը, հրատարակվող աշխարհաքաղաքական հսկայածավալ գրականության առկայությունը արդյունքն է երկար ժամանակ աշխարհաքաղաքականության նկատմամբ խորհրդային պետության արհամարհանքի անարդարացիության և նրա կարևորության գիտակցման, այդ երկրներում գիտական մտքի այս ուղղության լեգալացման, երկբևեռ աշխարհակարգը միաբևեռի փոփոխության, բազմաբևեռ աշխարհակարգին անցնելու նախանշվող տենդենցի, ինչպես նաև հետխորհրդային տարածքի երկրների՝ որպես միջազգային և աշխարհաքաղաքական հարաբերությունների նոր

սուբյեկտների կողմից այդ գործընթացներում իրենց կարգավիճակի և դրա բարձրացման ուղիների որոշման շահագրգռվածության:

Հսկայածավալ այս գրականության առկայությունը մի կողմից մեծացնում է գիտության այս ճյուղի զարգացման հնարավորությունները, մյուս կողմից էլ՝ խոչընդոտում դրան, որովհետև «աշխարհաքաղաքականի» թերմշակ լինելու պատճառով, շատ հեղինակներ առանց հիմնավորումների, ամենատարբեր երևույթներ համարում են աշխարհաքաղաքական և դրանով օժանդակում այս հասկացության արժեզրկմանը:

4. <u>Աշխարհաքաղաքականության սուբյեկտների կողմից այս գիտության տեսական կարևորագույն խնդիրների նկատմամբ անուշադրությունը որպես աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակի պատճառ</u>:

Աշխարհաքաղաքականության զարգացման մակարդակի և դրա պատճառների մասին կարելի է կարծիք կազմել աշխարհաքաղաքականության ժամանակակից դասագրքերում ներկայացված այս գիտության հիմնական բնութագրիչներից, մասնավորապես՝ նրա խնդիրներից, որոնք ընդհանրապես բացակայում են կամ ներկայացված են ընդամենը մեկ-երկուսը (ըստ հեղինակների՝ կարևորները): Աշխարհաքաղաքականության բնութագրիչները ներկայացնելիս բավարարվում են ուսումնասիրության օբյեկտի, առարկայի և «աշխարհաքաղաքականության» սահմանումներով կամ բնութագրումներով, որոնք տարբեր են:

Աշխարհաքաղաքականության սուբյեկտների կողմից անուշադրության են մատնվել աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային տարբեր մակարդակների հետազոտության մեթոդաբանության մշակման խնդիրները, որոնց մեջ հատկապես կարևոր է ուսումնասիրության հիմնական օբյեկտի՝ պետության՝ որպես աշխարհաքաղաքական օբյեկտի և սուբյեկտի համալիր հետազոտության մեթոդաբանության մշակման խնդիրը:

Աշխարհաքաղաքականության զարգացման ցանկալի մակարդակն ապահովելու գործում իր բացասական դերն ունի նաև աշխարհաքաղաքականության կոնկրետ գիտական մի շարք հասկացությունների և տերմինների տեսական թերմշակությունը, իրենց բովանդակությունում «աշխարհաքաղաքականն» ունեցող հասկացությունների և այլ բնույթի հասկացությունների փոխառնչությունների բացահայտմանը վերաբերող խնդիրների նկատմամբ անուշադրությունը և այլն:

Աշխարհաքաղաքականության տեսական խնդիրները ոչ միայն նրա զարգացման ցածր մակարդակի պատճառներ են, այլև՝ բնութագրիչներ:

Աշխարհաքաղաքականության ամենակարևոր, ամենաբարդ և դեռևս չլուծված տեսական-մեթոդաբանական խնդիրը, որը գլխավոր խոչընդոտն է նրա զարգացման ցանկալի մակարդակի ապահովման գործում, աշխարհաքաղաքական կանխատեսման մեթոդաբանության մշակման խնդիրն է, որի լուծումը աշխարհաքաղաքականության համար բեկումնային նշանակության կունենա: Աշխարհաքաղաքականության զարգացման հետագա մակարդակը շատ բանով պայմանավորված է այս խնդրի լուծման գործում աշխարհաքաղաքականության հաջողություններով:

Նոր աշխարհակարգում աշխարհաքաղաքական տարածության և նրա ենթակարգային միավորների զարգացման և անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ է թելադրվում աշխարհաքաղաքականության տեսական թերմշակության հաղթահարման և աշխարհաքաղաքականության զարգացման տեմպերի արագացման անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականություն

1. Լեխին Ի.Վ., Քաղաքական համառոտ բառարան: Թարգմ. Ս.Կ.Խաչատրյանի, Եր., 1966
2. Փիլիսոփայական բառարան: Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ: Թարգմանություն ռուսերեն երրորդ հրատարակությունից, Եր., 1975
3. Географический энциклопедический словарь. Понятия и термины. Гл. ред. А. Ф. Трешников М., 1988.
4. Дугин А. Г. ***Основы геополитики. Геополитическое будущее России. Мыслить пространством. Изд. 4-е, М., 2000.***
5. **Сирота Н. М.** Геополитика. Краткий курс. Спб, 2006.
6. Словарь иностранных слов. М., 1990.
7. **Философский энциклопедический словарь** 2-е издание. Ред. колл. С.С. Аверинцев, Э. А. Араб-оглы, А. Ю. Ильичев, С. М. Ковалев и др. М., 1989.